ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնները խախտելու դեպքի կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2026 թվականի մարտի 25-ի «Ծառայողական քննություն նշանակելու մասին» թիվ 2229-Ա հրամանի հիման վրա անցկացված ծառայողական քննության արդյունքների վերաբերյալ

2026 թվականի ապրիլի 2 **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2026 թվականի մարտի 25-ի «Ծառայողական քննություն նշանակելու մասին» թիվ 2229-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) ծառայողական քննություն է (այսուհետ նաև՝ Ծառայողական քննություն) նշանակվել՝ **Քաղաքացիական ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնները խախտելու դեպքի կապակցությամբ, որով պարզաբանման ենթակա հարցերն են՝**

1. վարքագծի (էթիկայի) կանոնների խախտում առաջացնող պատճառների ու դրանց նպաստող պայմանների պարզումը
2. վարքագծի (էթիկայի) կանոնների խախտում կատարած անձանց շրջանակը, մեղքի աստիճանը, դրսևորման ձևերը
3. վարքագծի (էթիկայի) կանոնների խախտման դեպքը, բնույթը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը ձևը, եղանակը և այլն)
4. օրենքով նախատեսված կանգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից կիրառվելիք կարգապահական տույժի հիմնավորվածությունը
5. վարքագծի (էթիկայի) կանոնների խախտման հետևանքները:

Ծառայողական քննության անցկացման եղանակի, քննությունն իրականացնող աշխատանքային խմբի անհատական կազմի և քննության անցկացման ժամկետի սահմանման համար հիմք են ընդունվել ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր

քարտուղարի 2026 թվականի մարտի 25-ի «Ծառայողական քննություն նշանակելու մասին» թիվ 2229-Ա հրամանը՝ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանի և նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Ալբերտի Սարգսյանի կողմից քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու դեպքի կապակցությամբ.

Հրամանի Հավելվածի 1-ին կետով հաստատվել է Ծառայողական քննություն իրականացնող աշխատանքային խումբը հետևյալ անհատական կազմով՝

<u>Գայանե Հովհաննիսյան</u>- *Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության քարտուղարության պետ (ծառայողական քննության նախագահ),*

<u>Նարինե Բարսեղյան</u> - *Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ՄՔ ծառայության քաղաքացիների խորհրդատվության և զանգերի սպասարկման բաժնի պետ*

<u>Քնարիկ Իսոյան -</u> *Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ՄՌԿՎ բաժնի պետ*

<u>Վահրամ Ալեքսանյան-</u> *Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի առաջին բաժնի պետ*

<u>Հակոբ Քնաջյան-</u> *Հայաստանի Հանրապետության ԿԳՄՄՆ իրավաբանական վարչության պետի տեղակալ* /ՆԻՍՏԵՐԻՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ/

Քննության շրջանակներում քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների խախտումների պատճառները ուսումնասիրելու նպատակով՝ որպես քննության կողմ /քաղաքացիական ծառայող՝ ում նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն/ ներգրավվել է Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Ալբերտի Սարգսյանը:

Հանձնաժողովի կողմից որոշվել է հնարավոր առնչություն ունեցող անձանց շրջանակը՝ դրա վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Մի շարք ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում խախտումների առկայության և/ կամ բացակայության մասով արձանագրում ենք հետևյալ հանգամանքները.

1. Ծառայողական քննության անցկացման համար հիմք է հանդիսացել Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանի և նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Ալբերտի Սարգսյանի կողմից քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները ենթադրյալ խախտման դեպքը:

Այսպիսով՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ <Հանրային ծառայության մասին> օրենքի 3-րդ հոդվածի 1-3-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ի թիվս այլնի ընդգրկում է նաև պետական ծառայությունը, որը իր հերթին ի թիվս այլնի ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս»:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ՀՀ փոխվարչապետի 04.10.2022թ. N 697-Ն որոշմամբ հաստատվել է քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ կանոնագիրք): Կանոնագրքի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող ՀՀ քաղաքացիների վրա:

Կանոնագրքի 4-րդ կետի համաձայն՝ Քաղաքացիական ծառայողը, իր պարտականությունների կատարման ընթացքում և աշխատանքից դուրս պարտավոր է հետևել վարքագծի կանոններին:

Սույն դեպքով քննության կողմ ներգրավված Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Ալբերտի Սարգսյանը հանդիսանում են քաղաքացիական ծառայող, ուստի հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին հետևելը վերջիններիս հիմնական պարտականություններն են, ընդ որում դրանք պետք է դրսևորվեն նշանակված պաշտոնին վայել վարքին և բարեկիրթ վերաբերմունքին համարժեք պահելաձևով:

Կանոնագրքի 10-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք վարկաբեկում կամ նսեմացնում են հանրային ծառայությունը կամ իր աշխատավայրը հանդիսացող պետական մարմնի հեղինակությունը»:

Կանոնագրքի 21-րդ կետի համաձայն՝ <<Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ողջամտորեն ընկալվել որպես անհարգալից վերաբերմունք քաղաքացիների, ղեկավարների, ենթակաների կամ այլ գործընկերների նկատմամբ»:

Կանոնագրքի 23-րդ կետի համաձայն՝ << Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ցանկացած պայմաններում և իրավիճակներում լինել բարեկիրթ, բարեվարք, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով, զերծ մնալ հանրային ծառայության հեղինակությունը վարկաբեկող, հանրային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ հանրային ծառայողի անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց>>:

Կանոնագրքի 24-րդ կետի համաձայն՝ << Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն>>:

Կանոնագրքի 25-րդ կետի համաձայն՝ << Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում՝ պահպանել հանգստություն, բարեկրթություն>>:

ՀՀ Ներքին գործերի նախարարի 26.12.2024թ. N98-Լ հրամանի 1-ին հավելվածով հաստատված ՆԳՆ ՄՔԾ կողմից մատուցվող ծառայությունների չափորոշիչների 2-րդ <<Ծառայությունների մատուցման կարգը>> վերտառությամբ կետով սահմանվում են կանոններ, ընթացակարգեր և սկզբունքներ, որոնք ապահովում են ծառայությունների բարձր որակ, արդյունավետություն և քաղաքացիների բավարարվածություն:

Չափորոշիչների 2-րդ կետի 1-ին ենթակետի <<ե>> պարբերության համաձայն ծառայությունների կազմակերպչական պայմաններից է հանդիսանում ծառայության

մատուցման գործընթացի արհեստական ծանրաբեռնման բացառումը, տվյալ ծառայության մատուցման համար քաղաքացուց չսահմանված, ոչ էական նշանակություն ունեցող փաստաթղթերի և տեղեկատվության պահանջի բացառումը:

Չափորոշիչների 2-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերության համաձայն ի թիվս այլնի ծառայությունների կազմակերպչական պայմաններից է իրավիճակային խնդիրների հնարավորինս արագ և արդյունավետ լուծումը:

Չափորոշիչների 2-րդ կետի 3-րդ ենթակետի <<գ>> պարբերության համաձայն ծառայությունների կազմակերպչական պայմաններից է կոնֆլիկտային իրավիճակի հարթումը, որի շրջանակներում կոնֆլիկտային իրավիճակ առաջանալու դեպքում աշխատակիցը պարտավոր է զերծ մնալ անձնական վիրավորանքներից և անբարեկիրթ վարքագիծ, դրսևորելու առավելագույն հարգանք և զսպվածություն: Կոնֆլիկտները պետք է կարգավորել արհեստսավարժության և դիվանագիտության միջոցով՝ փնտրելով փոխշահավետ լուծումներ և լարվածության թուլացում՝ հանգիստ և ռացիոնալ հաղորդակցության միջոցով:

Սույն քննությամբ ձեռք բերված փաստական հանգամանքներից, այդ թվում 10.12.2025թ.-ին Նոր Նորքի բաժին դիմած Ա.Համրունի, տվյալ բաժնի և ղեկավարի միջև տեղի է ունեցել միջադեպ:

Միջադեպը պայմանավորված է եղել հետյալում՝ 10.12.2025թ.-ին Ա.Համրունին դիմել է ք.Երևան, Բորյան 1/1 հասցեում գտնվող Նոր Նորքի բաժին (Այսուհետ՝ Բաժին) իր անվամբ ձևակերպված անձնագիրը ստանալու նպատակով: Անձագիրը ստանալիս նկատել է, որ հայրանունը սխալ է գրառվել («Արի»-ի փոխարեն՝ «Արիի»): Խնդրի մասին հայտնել է Բաժնի պետ Նատալի Կոստանդյանին: Վերջինս իր հետ խոսել է բարձր տոնով՝ պնդելով, որ Բաժինն իր աշխատանքը կատարում է օրենսդրական կարգավորումների շրջանակներում, այնուհետև պահանջել է՝ «Ստորագրեք և դուրս եկեք»: Նշել է նաև, որ փաստաթուղթը (անձնագրային գործողությունների վերաբերյալ դիմումը) չէր ստորագրի, եթե իր նկատմամբ ճնշում չգործադրվեր: Քաղաքացին հայտնել է, որ Ն.Կոստանդյանի ուղղորդմամբ ծննդյան վկայականում համապատասխան ուղղում կատարելու համար դիմել է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալություն, որտեղ, սակայն, վերջինիս վստահեցրել են, որ ծննդյան վկայականում տվյալները ճիշտ են գրառվել, սխալը թույլ է տրվել Ծառայության համապատասխան բաժնի կողմից: Նշվածից հետո վերջինս կրկին ներկայացել է Բաժին, ինչի

արդյունքում Ն.Կոստանդյանը համաձայնել է հարցում ուղարկել ՔԿԱԳ գործակալություն՝ խնդրի հստակեցման նպատակով: Քաղաքացին իր դժգոհությունն է հայտնել նաև Ն.Կոստանդյանի՝ անընդհատ անձնական թեմաներով հեռախոսային խոսակցություններից, Բաժնում իրեն հասցեագրված սեռական բնույթի ծաղրախոսություններից, և ընդհանուր առմամբ՝ Բաժնի աշխատակիցների՝ իրենց իսկ աշխատանքի նկատմամբ մոտեցումից և քաղաքացիների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից: Քաղաքացին նշել է նաև, որ Բաժնի աշխատակից Աննա Սարգսյանն իրեն երկու անգամ անհարմարություն է պատճառել՝ մոռանալով իրենից նախապես պահանջել անհրաժեշտ փաստաթղթերը: Բողոքի կապակցությամբ համապատասխան պարզաբանում է պահանջվել Բաժնի պետ Ն.Կոստանդյանից: Վերջինս նշել է, որ հայրանունը «Արիի» գրառելիս հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ ՔԿԱԳ գործակալության կողմից տրամադրվող ծննդյան վկայականներում հայրանունը գրառվում է ուղիղ ձևով՝ առանց հոլովման, իսկ հոլովումը կատարվում է Ծառայության կողմից՝ անձնագիր տրամադրելիս: Հաշվի առնելով նշված հանգամանքը և այն, որ դիմումատուի ծննդյան վկայականում հայրանունն արդեն իսկ հոլովված էր, անձնագրում «հայրանուն» դաշտը գրառվել է «Արիի»: Այնուհանդերձ՝ ՔԿԱԳ գործակալություն կատարած հարցման պատասխանը ստանալուց հետո դիմումատուի անվամբ ձևակերպվել է նոր անձնագիր՝ «Արհատ Արի Համրունի» անհատական տվյալներով և տրամադրվել վերջինիս: փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով Ծառայության կողմից 07.01.2026թ. թիվ 42/94/5/2293-26 գրությամբ հարցում է կատարվել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալություն, որով, համապատասխան իրավական կարգավորումների վկայակոչմամբ, խնդրել ենք առկա փաստական հանգամանքների շրջանակներում տրամադրել պարզաբանում՝ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում (ծննդյան վկայական, անունը, ազգանունը, հայրանունը փոխելու մասին հաղորդում, անվան փոփոխման փաստաթուղթ) քաղաքացու հայրանվան գրառումների տարբերության՝ մասնավորապես դրանք հոլովված և չհոլովված տարբերակով գրառելու վերաբերյալ, և հայտնել, թե հայրանվան գրառման որ տարբերակն է համարվում իրավաչափ՝ առկա օրենսդրական կարգավորումների շրջանակներում: Ստացված պատասխանի համաձայն՝ ՔԿԱԳ էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական գրանցամատյանում առկա է ՔԿԱԳ գործակալության կողմից 14.11.2025 թվականին կատարված անվան փոխման թիվ 1448

ակտային գրանցումը, համաձայն որի Մարատ Խաչիկ Լալայանի տվյալները փոփոխվել են Արհատ Ար Համրունի: Հայտնել են նաև, որ անվան փոխման ակտային գրանցման մեջ փոփոխվող տվյալները լրացվել են անվան փոխման դիմումի հիման վրա, որը ստորագրված է դիմումատուի՝ Մարատ Լալայանի կողմից: Նշված անվան փոխման ակտային գրանցման հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել Սիսիանի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 16.04.2004 թվականին կատարված Մարատ Խաչիկի Լալայանի ծննդի թիվ 142 ակտային գրանցման մեջ, մասնավորապես՝ «Երեխայի մասին տեղեկություններ» սյունակում լրացվել են հետևյալ տվյալները՝ «Անուն» բաժնում՝ «Արհատ», «Հայրանուն» բաժնում՝ «Արի», «Ազգանուն» բաժնում՝ «Համրունի»: Կատարված փոփոխությունների հիման վրա տրամադրվել է ծննդի ԲԲ069814 վկայական:

Արհատ Համրունու կողմից փոխանցված իր մոտ առկա տեսաձայնագրությունները ծառայողական քննություն իրականացնող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է, սակայն ծառայողական քննությանը չի կցվել, քանի որ Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանի և նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Ալբերտի Սարգսյանի կողմից տեսաձայնագրելու համաձայնություն առկա չէ:

<< ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի>> 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հիմնական իրավունքերի խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է: Որպես հիմնական իրավունք <<ՀՀ Սահմանադրության>> 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

Միաժամանակ արձանագրում ենք, որ հանձնաժողովի կողմից տեսաձայնագրությունների ուսումնասիրության արդյունքում հստակ երևում է, որ Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանը քաղաքացու կողմից խնդիրը ներկայացնելու ընթացքում պարբերաբար ընդհատում է վերջինիս, մեկ այլ դրվագում կրկին խնդիրը ներկայացնելու ընթացքում՝ առանց քաղաքացուց ներողություն խնդրելու պատասխանում է հեռախոսազանգերին, միաժամանակ քաղաքացու հետ խոսում է «դու»-ով:

Հավելենք նաև , որ տեսակապով հանդիպման ընթացքում Համրունին տեղեկացրեց, որ նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Ալբերտի Սարգսյանի վարքագծից չունի դժգոհություն, և որ վերջինիս հետ կապված դժգոհությունը պայմանավորված է իր պարտականությունների կատարման հետ:

Ամփոփելով վերոնշյալը կարելի է փաստել, որ Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանի կողմից առաջացած իրավիճակում դրսևորած վարքագիծն ինչ որ առումով քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների խախտման երևույթ է:

Ինչ վերաբերում է ավագ մասնագետ Աննա Սարգսյանի աշխատանքային պարտականությունների կատարմանը, ապա այս մասով հանձնաժողովն արձանագրում է, որ հնարավոր է Ա.Սարգսյանի կողմից պարտականությունները կատարվել են ոչ պատշաճ, սակայն նշված հանգամանքի ուսումնասիրությունը դուրս է ծառայողական քննության շրջանակում էթիկայի հանձնաժողովի ուսումնասիրության լիազորությունների շրջանակից:

Այս մասով առաջարկվում է քննարկման առարկա դարձնել վերոնշյալ հանգամանքը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 25.03.2026 ԹՎԱԿԱՆԻ N2229-Ա

ՀՐԱՄԱՆՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ

ՔՆՆՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գայանե Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության քարտուղարության պետ (ծառայողական քննության նախագահ),

Նարինե Բարսեղյան - ***Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ՄՔ ծառայության քաղաքացիների խորհրդատվության և զանգերի սպասարկման բաժնի պետ***

Քնարիկ Իսոյան - ***Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ՄՌԿՎ բաժնի պետ***

Վահրամ Ալեքսանյան- ***Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի առաջին բաժնի պետ***

Հակոբ Քնաջյան- ***Հայաստանի Հանրապետության ԿԳՄՄՆ իրավաբանական վարչության պետի տեղակալ*** – ՆԻՍՏԵՐԻՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ

Հավելենք նաև , որ փեսակապով հանդիպման ընթացքում Համրունին փեղեկացրեց, որ նույն բաժնի ավագ մասնագետ Աննա Այբերդի Սարգսյանի վարքագծից չունի դժգոհություն, և որ վերջինիս հետ կապված դժգոհությունը պայմանավորված է իր պարտականությունների կատարման հետ:

Ամփոփելով վերոնշյալը կարելի է փաստել, որ Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանի կողմից առաջացած իրավիճակում դրսևորած վարքագիծն ինչ որ առումով քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների խախտման երևույթ է:

Ինչ վերաբերում է ավագ մասնագետ Աննա Սարգսյանի աշխատանքային պարտականությունների կատարմանը, ապա այս մասով հանձնաժողովն արձանագրում է, որ հնարավոր է Ա.Սարգսյանի կողմից պարտականությունները կատարվել են ոչ պատշաճ, սակայն նշված հանգամանքի ուսումնասիրությունը դուրս է ծառայողական քննության շրջանակում էթիկայի հանձնաժողովի ուսումնասիրության լիազորությունների շրջանակից:

Այս մասով առաջարկվում է քննարկման առարկա դարձնել վերոնշյալ հանգամանքը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

ԲԱՐՏՈՒՂԱՐԻ 25.03.2026 ԹՎԱԿԱՆԻ N2229-Ա

ՀՐԱՄԱՆՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ

ՏՆՆՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գայանե Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության քաղաքաշինության պետ (ծառայողական քննության նախագահ),

Նարինե Բարսեղյան - Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ՄՔ ծառայության, քաղաքացիների խորհրդատվության և զանգերի ապասարկման բաժնի պետ,

Քնարիկ Իսոյան - Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ՄՈԿՎ բաժնի պետ

Վահրամ Ալեքսանյան- Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի առաջին բաժնի պետ

Հակոբ Քնաջյան- Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍՆ իրավաբանական վարչության պետի տեղակալ - ԼԻԱՍԵՐԻՆ ՀԻ ԻՐԱՎԱԲԱՆԻ